ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գօնէ այսուհետեւ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Թիւրքահայերի ամուսնութիւնները. Նամակ Շուշուց. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տգիտութեան զոհեր.

ԳՕՆԷ ԱՅՍՈՒՀԵՏԵՒ

—

Բագուից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ նաւթային շրջաններում լուրջ կերպով սկսել են հետաքրքրվել հրդեհների խնդրով: Մի յատուկ յանձնաժողով, որ ընտրվել էր վերջին նաւթարդիւնաբերական ժողովում, այժմ սկսում է նիստեր կայացնել մշակելու մի շարք միջոցներ հրդեհների առաջն առնելու ապագայում և անփնաս դարձնելու բռնկված հրդեհները:

Մի քանի անգամ, դժբաղդ դէպքերի առիթով, բարձրացել է Բագւում հրդեհներից ազատ մնալու խնդիրը, բայց մինչև այժմ նա չէ կարողացել լուրջ արդիւնքներ առաջացնել գործնական կեանքի մէջ: Գոնէ այս անգամ սկսված գործը կանգ չառնէր կէս ճանապարհին և իրագործէր վերջապէս այն ցանկութիւնները, որոնք յայտնված են մշտապէս՝ հասարակութեան, մամուլի և վարչական անձերի կողմից:

Սրանից քսանեօթ տարի առաջ, 1874 թւին, Բագւում յայտնվեց առաջին նաւթային շատրուանը: Դա մի նշան էր, մի ազդ էր, որ նաւթային գործը ունի մեծ ապագայ և նա պէտք է գրաւէ կապիտալներ և մարդիկ իր շուրջը: Բայց այն ժամանակից իսկ ծագեց և նաւթային հրդեհներից պաշտպանվելու և ապահով մնալու խնդիրը:

Նաւթային շրջանը մեծացաւ, ընդարձակվեց այնպիսի արագութեամբ, որի մասին երազել անգամ չէին կարող նրա զարգացման նախնական տարիներում: Ապշերոնեան թերակղզին արդիւնաբերում է 600 միլիօն փութ նաւթ, տալիս է մեծ հարստութիւններ ձեռնարկողներին, լուրջ աշխատանք բազմաթիւ բանուորներին, արհեստաւորներին և վարպետներին և պարապմունք գործարանների շրջանում գտնվող խանութպաններին, գործակատարներին, բեռնակիրներին և ուրիշ աշխատաւորներին:

Անկասկած, այդ բազմաթիւ մարդկանց կեանքի ապահովութեան խնդիրը պէտք է առաջին և կարևոր հարցերից մէկը լինէր, որ և պէտք է վճռված լինէր միւս հարցերից առաջ: Դժբաղդաբար՝ նա միշտ ստուերի տակ է մնացել, միշտ հանդէս է եկել իբրև մի չը ցանկացած, մի խորթ խնդիր և յետաձգվել տարէցտարի: Դժբաղդ դէպքերը նրան արթնացրել են ժամանակ առ ժամանակ: Բայց նա դարձեալ մոռացվել է:

Արդեօ՞ք այժմ նա պէտք է մօտենայ իր գործնական աջող լուծման: Արդեօ՞ք սարսափելի աղէտի սրտաճմլիկ տեսարանները և բազմաթիւ զոհերի աղէկտուր վիճակը պէտք է ոյժ ունենան մոռացութիւնից ազատելու այդ դժբաղդ հարցը, որ տարիներ շարունակ դրված է հասարակութեան առաջ, առանց իրագործութեան արժանանալու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մահվան մի լուր էլ ենք ստանում Թիւրքիայից: Այս անգամ հայ գործիչի մահը ունի իր սովորական, հայկական կերպարանքը: Երբ մեռաւ Մամուրեան, մեռաւ տիկին Տիւսաբ, մենք չը լսեցինք թէ այդ գրական գործիչները հեռացան այս աշխարհից ծանր չքաւորութեան մէջ, թողնելով անօգնական մեծ ընտանիքներ: Սա արդէն չէր սազում մեզ, հայերիս, եւ մենք մի րօպէ պիտի մոռանայինք, թէ այլ եւս հին իրականութիւնը չէ տիրում մեր մէջ, թէ հայ գործիչի ողբալի վերջը աւանդութիւնների աշխարհն է անցնում: Բայց մահը շտապեց փարատել մեր այդ րօպէական միամտութիւնը, ցոյց տալով, որ իրողութիւնը մնում է անփոփոխ: Մեռաւ Մկրտիչ Սարըեան: Ո՞վ է դա: Մի ուսուցիչ, որ նուիրված էր Թիւրքահայ գաւառներին: Եթէ դուք թերթէք վերջին քսան տարիների մեր պատմութիւնը, կը տեսնէք այնտեղ մի այսպիսի հանգամանք: 1878 թւականի դէպքերից յետոյ Թիւրքահայ գաւառները սկսում են ուշադրութեան արժանանալ: Ներսէս պատրիարքը, բացատրելով, թէ ինչ շահ ունեցան հայերը Բերլինի կօնգրէսից իր մի անմոռանալի ճառի մէջ հրաւիրում էր բոլոր կարող մարդկանց գնալ գաւառները, կրթութիւն եւ գիտութիւն տարածել այնտեղ: Հրաւէրը արձագանք գտաւ այն ժամանակվայ հայութեան մէջ: Կ. Պօլսում գոյութիւն ունեցող բարեգործական ընկերութիւնները միացան եւ ստացան Միացեալ ընկերութիւն անունը. ամեն կողմից տեղային նուէրներ եւ Միացեալ ընկերութիւնը սկսեց դպրոցներ բաց անել Հայաստանի խուլ անկիւններում: Պատմութիւնը ժամանակին կը գնահատէ այդ կրթասիրական շարժման նշանակութիւնը: Այժմ կասենք այն, որ տարիների ընթացքում Միացեալ ընկերութեան բոլոր գաւառական դպրոցների ընդհանուր տեսուչ էր Մկրտիչ Սարըեանը. այդ անունը կապված է այդ դպրոցների պատմութեան հետ: Եւ սակայն կարդացէք «Սուրհանդակ» լրագրի հետեւեալ տողերը:

Զմիւռնիայէ խմբագրութեանս ուղղուած հեռագիր մը կը գուժէ արդիւնաւոր ուսուցիչ Մկրտիչ Սարըեանի մահը: Այս մահը բոլորովին անակնկալ մըն է մեզի համար որովհետեւ հակառակ Սարըեանի կաթուածահար վիճակին, իր մահը այնքան մօտալուտ չէր կարծուեր: Հանգուցեալը վերջին օրերս անդամալոյծ հիւանդանոցը փոխադրուած էր եւ կը դարմանուէր ճարտար բժիշկներու միջոցաւ: Դեռ մէկ քանի օր առաջ մեր Զմիւռնիոյ թղթակիցը այցելած ըլլալով իրեն, կը հաւաստէր թէ թեթեւ բարւոքում մը տեսնուած է իր առողջական վիճակին մէջ: Սարըեան իր կեանքին մեծ մասը գաւառներու մէջ անցուցած էր, բայց գաւառական պարզ ուսուցիչ մը չէր ինքը: Հանգուցեալը իր ուսումը աւարտած էր Պոլսոյ Լիսէին մէջ եւ իր մայրենի լեզուին չափ հմտութեամբ կը խօսէր եւ կը գրէր ֆրանսերէնը եւ թուրքերէնը: Սարըեան ուսուցչութենէ եւ Միացեալ վարժարանաց տեսչութենէ զատ առեւտրական գործերով ալ պարապած է, եւ ասկէ 4—5 տարի առաջ Զմիւռնիա դարձած ատեն որ եւ է պաշտօն չունենալով, օրուան առաջնորդ Ասլանեան սրբազանի միջամտութեամբ տեղական երկաթուղւոյ ընկերութեան մը մէջ պաշտօնի կոչուած է, եւ քիչ ժամանակի մէջ հմտութիւնը գնահատուելով կարեւոր դիրք մը գրաւած է. բայց Սարըեան օր մը առաջնորդին ներկայանալով կը յայտնէ թէ ինք տեսչութեան կը հրաւիրուի ազգային վարժարանի մէջ եւ թէ կուզէ իր անձը կրթական գործին նուիրել: Այս կրթութեան նուիրուած անձն է որ կը մեռնի այսօր հիւանդանոցի անկիւնը մէկ քանի որբեր եւ այրի կին մը թողլով հանրային գթութեան կարօտ վիճակի մէջ:

Միշտ միեւնոյնը, միշտ նոյն տեսակ վախճան ամեն մէկի համար, որ գործիչ է եղել մեզանում: Քանիերորդ անգամն է, որ արձանագրվում են այսպիսի փաստեր: Դուք ձանձրացաք, ընթերցող, չէ՞: Բայց ինչ անենք, որ դուք չը ձանձրանաք. կարո՞ղ ենք փոխել իրականութիւնը, կամ կարո՞ղ ենք նրա տուած միանման տխուր փաստերի փոխարէն կերակրել ձեզ վարդագոյն տեսիլներով...

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Նամակ Խմբագրութեան)

Թիւրքահայ գաղթականների ամուսնական խնդիրը բաւական անախորժութիւնների պատճառ էր պսակվողների ու քահանաների մէջ: Մեր հոգեւոր իշխանութիւնը կարգադրել էր, որ ամուսնացող Թիւրքահայը նախապէս ներկայացնէ իր երկրի առաջնորդից վկայական իր ամուրիութեան մասին եւ ապա հրաման ստանայ պսակվելու: Վերջերս աւելի եւս դժուարացրին, պահանջելով, որ պսակվողը ներկայացնէ իր երկրի ծխական քահանայի վկայականը, վաւերացված վիճակաւոր առաջնորդի կողմից:

Անհագին ժամանակ խլելու հետ միասին շատ քչերին էր աջողվում ձեռք բերել պահանջված վկայականը: Բազմաթիւ գիւղեր աւերված են կամ գաղթել են. ծխատէր քահանաները չը կան—մեռած, տեղափոխված, գաղթած են. չը կան չափահասական մատեաններ, չը կան հաղորդակցութեան կանօնաւոր ճանապարհներ: Իսկ եթէ ստացվում էլ էին վկայականներ, սովորաբար առաջնորդները գրում էին—այս ինչը «ցորչափ գտանէր սաս չէր ամուսնացեալ»: Բայց այս «ցորչափ գտանելու» եւ պըսակվելու օրի մէջ անցած էին լինում 6—8—10 եւ աւելի տարիներ: Պսակվողն այդ ձիգ ժամանակամիջոցում պատել է այլ եւ այլ երկիրներ, արդ՝ ո՞վ պիտի վկայէր այս ազատ պարտած ժամանակամիջոցի համար: Խնդիր էր յարուցվում. գործը ծխատէր քահանայից գնում էր գործակալին, սրանից հոգեւոր կառավարութեան, կօնսիստօրիային, սինօդին կամ Վեհափառ Կաթուղիկոսին, որ հրամայում էր կատարել տեղեակ ու վստահելի անձերի երդմնական քննութիւն ու ապա գործն ուղարկել իրան՝ Վեհափառին, վերջնական որոշման: Պսակվողների ոչ ժամանակը, ոչ կայութիւնը, ոչ ընտանեկան պայմանները չէին հնարաւոր անում այդքան սպասելը: Նրանք՝ շարունակ դիմում էին քահանային, աղաչում էին նրան, պահանջում էին նրանից, հայհոյում էին նրան. շատ անգամ թիւրք հիւպատոսից աւելի, քան թէ անողոք քահանայից գութ սպասելու յուսով դիմում էին նրան, հետեւանքը անհամբերների կամ համբերելու հնարաւորութիւն չունեցողների համար լինում էր ապօրինի կենակցութիւն կամ օտար եկեղեցու դիմումն: Քահանաների բողոքները մնում էին անհետեւանք: Սինօդը չէր կամենում փոխել արդէն իր արած կարգադրութիւնը: Եւ այս կարգադրութեան խստութեան նպատակն էր, որ մի կողմից միջոց չը տրվի խաբեբայ, որիկայ մարդկանց իրանց կնոջ կենդանութեան ժամանակ պսակվելու եւ միւս կողմից պսակող քահանային ապագայ պատասխանատուութիւնից զերծ պահելու: Իսկ բուն պսակվողների՝ օրինաւոր ընտանիքներ կազմակերպելուն նը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐ

—

Անցեալ ձմեռ գործով գնացել էի Գանձակի գաւառի Ղ. գիւղը, որ գտնվում է Կեփազ լեռան հիւսիս-արեւելեան կողմի ձորակներից մէկում: Գիւղը զուտ հայաբնակ է եւ ունի երեսուն տուն. բնակիչները պարապում են երկրագործութեամբ, մասամբ պարտիզպանութեամբ, իսկ ձմեռը սայլապանութեամբ: Մեր երկրի լեռնոտ մասի գիւղերին յատուկ տիպն ունի նա. դիրքը զառիվայր, տները յիշեցնում են Քսենոֆօնի ժամանակը, բացի մի երկուսից, որոնք երկյարկանի են եւ կղմինտրով ծածկված. Դրանցից ամենալաւը՝ ինձ հիւրասիրող՝ գիւղի երիտասարդ քահանային էր պատկանում:

Տանտէրս, քահանան, միակ մարդն էր գիւղում, որի հետ կարող էի միտք փոխանակել. Նա էլ օրվայ մեծ մասը հարեւան գիւղի դպրոցում դասատուութիւն էր անում, կամ իր ծխականների կրօնական ծիսակատարութեան ետեւից էր ընկած, այնպէս որ ես բոլորովին միայնակ էի եւ եթէ ի նկատի ունենանք, որ առաջիս երեք ամիս կար, հասկանալի կը լինի աննախանձելի վիճակս: Բարեբաղդաբար քաղաքից գալիս վերցրել էի Գ. Ուսպենսկու երկու հատորը, որ իմ միակ զբօսընկերս պիտի լինէր գիւղական տաղտկալի ձմեռվայ ամբողջ ընթացքում:

Դեկտեմբերի վերջին օրերից մէկն էր:

Մռայլ ու մշուշապատ էր երկինքը, օդի մէջ կարծես ջրային փոշի էր կանգնած, որի ազդեցութեան տակ քանի օր առաջ եկած ձիւնը հալվելով՝ գիւղի նեղլիկ, ծուռ ու մուռ փողոցներում ցեխաջրի վարար առուակներ էր գոյացրել, որոնք գչգչալով վազում էին դէպի ձորը՝ միանալու գետակին:

Անտանելի ցեխի պատճառով անցուդարձը դադարել էր. երկու գաղթականներ միայն՝ զինված մի-մի զոյգ ձահակներով՝ հերսոտ շների վոհմակի դէմ մաքառելով, դանդաղաքայլ տնից տուն էին թափառում «փայ» հաւաքելու:

Ճնշված սրտով դիտում էի սենեակի լուսամուտից այս անհրապոյր տեսարանը, երբ տանտէր քահանան, ուսումնարանից վերադարձած լինելով, մտաւ տուն եւ սկսեց շտապով հաւաքել իր պաշտօնի պարագաները—կիսամաշ շուրջառը, բուրվառը, ժամանակից սեւացած արծաթէ խաչը եւ մաշտոցը. այդ ամենը յանձնելով դրսում սպասող տիրացուին, դարձաւ ինձ ասելով.

—Գնում եմ հանգստարան «Եօթը» կատարելու, ուզում ես, դու էլ արի, ման կը գաս, սիրտդ կը բացվի քիչ:

Թէեւ դրսի ցեխը ոչ մի սրտաքաշութիւն չէր խոստանում, այնուամենայնիւ հետեւեցի տանտիրոջս խորհրդին, որովհետեւ երկար նստելուց ձանձրացել էի:

Գերեզմանատունը գտնվում էր գիւղի գլխին. զառիվայր ճանապարհով դժուարութեամբ առաջ էինք գնում. գնացքի առաջապահը տէր հայրն էր, վերջապահը տիրացուն, իսկ կենտրոնը բռնել էի ես, որպէս զի ապահով պաշտպանված լինեմ շների յարձակումից, որոնց վանելու ծանրութիւնը վերջապահ Սուղի-դայուն էր վիճակված: Սա էլ մերթ բուրվառն էր թափ տալիս, մերթ գոռում էր «Ա. չոն, կորի»:

Ձորի՝ գլուխ պտտեցնող խորութիւնից ուղղաձիգ դէպի վեր սեպացած ժայռի հատած գլուխը մի փոքրիկ սարահարթ է ներկայացնում, որ ծածկված է զանազան ձեւի եւ մեծութեան գերեզմանաքարերով. աչքի էին ընկնում 10—15 թարմ հողաթմբեր. քահանան բացատրեց, որ ծաղիկը գիւղում աւերածութիւն է անում:

Մինչեւ տէր-հայրը իր տիրացուի օգնութեամբ իր պաշտօնն էր կատարում, ես թափառելով հանգստարանում տապանագրերն էի կարդում: Պարզ, անշուք շիրիմներ էին, բոլորն էլ միատեսակ արձանագրութիւններով, որոնք սկսվում են «սաս հանգչի» կամ «այս է տապան»-ով: Բայց ահա մի սրբատաշ քար հեռուից գրաւեց իմ ուշադրութիւնը իր հսկայական չափերով, որի նմանը չը կար ամբողջ հանգստարանում: Երեւի մի նշանաւոր քաջի, կամ գիւղական հարուստ համբայի գերեզման է, մտածեցի ես մօտենալով դէպի այդ քարը. սակայն սպասածս չը գտայ: «Այս է տապան Բուզլուխեցի Կիրակոսի դստերն եւ Մարկոսի կողակցին... ծնաւ 1878 վխ. ի 1892»:

Արձանագրութիւնը չէր ցոյց տալիս ոչ մի արտակարգ դէպք կամ յատկութիւն, որի համար այդ գեղջկուհին արժանացած լինէր գիւղի համար չտեսնված համարվող այդ հոյակապ յուշարձանին: Երկար դիտելուց յետոյ, ուշք դարձրի թւականների վրա եւ սառած մնացի:

Տասնեւչորս տարեկան կողակից...

Քարի ճակատի կողմում քանդակված էր մի անճաշակ պատկեր, որ ներկայացնում էր մի ջահել կին՝ ծաղիկը ձեռքին՝ Գանձակի գաւառի հայուհու տարազով: Քանդակողը լաւ նշանաբան էր ընտրել ծաղիկը, ուզելով հասկացնել, որ բռնութեամբ թփից պոկած կիսաբաց ծաղիկը վաղաժամ խամրելով՝ նետվել է սառ հողի

պաստելու կարեւորագոյն խնդիրը գրաւած էր երկրորդական տեղ։

Որ ոչ մի իշխանական կարգադրութիւն չէ կարող վերջ դնել սրիկայութիւններին, որ սրիկաների պատճառով արդարութիւն չէ թէ կարգին մարդկանց առաջ դիւրութիւններ փակելը եւ թէ պսակելու բոլոր պատասխանատուութիւնը միայն պսակող քահանայի գլուխ փաթաթելը—պարզ է։

Այս խնդիրը շատ գործնական կերպով լուծուած է միւս քրիստոնեայ եկեղեցիներում։ Այնտեղ շաբաթով առաջ ծանուցում է լինում, թէ այս ինչ զոյգերը նշանուած են եւ ամուսնանալու են, ուստի հրաւիրվում են նրանք, որոնք սրանց ամուսնութեան դէմ որ եւ է արգելք գիտեն, գան յայտնեն քահանային։ Եւ իրաւ, քրիստոնեայ բարոյական ընտանիք կազմելու խնդիրը հոգեւոր իշխանութիւնից ու պսակող քահանայից ոչ նուազ կարեւոր ու հետաքրքրական պիտի լինի նոյն իսկ քրիստոնեայ համայնքի ծխական գերդաստանի համար։ Երբ արգելք յայտնողներ չեն գտնվում, թէ քահանայի եւ թէ պսակվող երկու կողմերի համար վստահելի ճանաչված մարդիկ երաշխաւորութիւն են առնում իրանց վրա եւ ստորագրելով յատուկ այդ մտքով կազմված արձանագրութիւնը, դիւրութիւն են տալիս պսակի խորհուրդը անարգելք կատարելու։

Այդ նոյն ձեւը պէտք էր մացնել նաեւ մեր մէջ. մանաւանդ, որ մեզանում եւս այս խնդիրը թէ վերջ ի վերջոյ վկաների ու տեղեակ անձանց քննութեամբ է վերջանում եւ թէ ամենաառաջնակարգ նշանակութիւն ունի մեր ազգի գոյութեան նկատմամբ։

Այժմ մեր գաղթական Թիւրքահայ ազգայիններին, մանաւանդ Բաթումի իմ ծխականներին եւ իմ կարգակից եղբայրներին ուրախութիւն պատճառած լինելու համար գալիս եմ յայտնելու, որ Վեհափառ Կաթուղիկոսը յունվարի 27-ին շրջաբերական կոնդակ արձակեց բոլոր թեմակալ առաջնորդների անունով, բաւարար լուծումն շնորհելով այս կարեւոր խնդրին։ Այն է՝ հրաման տուեց պսակելու այն Թիւրքահայ գաղթականներին, որոնք ամբողջ գերդաստանով փոխադրված են մեր կողմերը, որոնք դեռ մատաղ հասակից մեկնած են հայրենիքից եւ ճանաչված են թէ տեղացիներից եւ թէ քահանաներից, որոնք 10 կամ աւելի տարիներից ի վեր ապրում են մեր երկրում եւ կարող կը լինեն վստահելի ու գրագէտ վկաների—թէեւ գոնէ 6—7—երդմնական քննութեամբ հաստատել տալ իրանց ամուրիութիւնը եւ որոնց ամուսինները վախճանված են մեր կողմերում ու կարող կը լինեն ներկայացնել թաղող քահանայի վկայականը։

Արգելվում է միայն նորեկ, անծանօթ, օրինաւոր անցաթուղթ, ծննդեան վկայական չունեցողների պսակը։ Այսպիսիների համար հրամայվում է—պսակվելուց երեք ամիս առաջ յայտնել քահանային, որ սա պսակվողի անունը, ազգանունը, գիւղը, քաղաքը, նահանգը, տարիքը յայտնէ յայտարարութեամբ իր հոգեւոր կենտրոնական իշխանութեանը, վերջինս Վեհափառ Կաթուղիկոսի, որը իր դիւանի միջոցով կը ստանայ առաջնորդներից կարեւոր տեղեկութիւններ եւ նրա համեմատ կարձակէ իր վճիռը։

Մ. ք. Մելեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յունվարի 11-ին

Ութ ամիս սրանից առաջ մեր կօնսիստորիան ենթարկվեց ծանր հարուածի։ Ինչպէս յայտնի է, Էջմիածինը, հիմնվելով մի քանի բողոքների վրա, յանձնեց Նախկին լիազօր տեսուչ Տիրայր վարդապետին քննութիւն կատարել, բայց հէնց նրա արբանեակների գործն էին այդ բողոքները... Հողը պատրաստ էր, հայր քննիչը միջից կէս էր լինում զեղծումներ գտնելու... Եւ ինչ գտաւ... համարեա ոչինչ... Նա մեծ գործ առեղծեց, մրոտեց շատ թերթեր, բայց ոչ մի լուրջ մեղադրանք...։

Եկաւ սինօդի անդամ Աշոտ վարդապետը։ Նա բաւականացաւ միայն Տիրայրի քննութեամբ... Նրան իսկոյն շրջապատեցին, սովորաբար, չորս հացկատակ խնդրագիրներ։

Գործը այնպէս առաջ տարվեց, որ Աշոտ վարդապետը, հիմնվելով ոչ թէ արդարութեան, այլ իշխանաւորի իրաւունքի վրա, հեռացրեց կօնսիստորիայի անդամ քահանաներին, իսկ ատենադպրին եւ էկզէկուտորին արձակեց ծառայութիւնից՝ օրէնքի 3 յօդուածի հիման վրա։ Դա մի շատ ծանր պատիժ էր, որին ենթարկվում են ամենամեծ զեղծումների մէջ բռնված ստորաճանաւորները։

Բայց ո՞րն էր կօնսիստորիայի պաշտօնեաների մեղքը։ Ահա այդ բանը անկարելի էր լինում իմանալ։

Ատենադպիրը եւ էկզէկուտորը շտապում են Էջմիածին, պահանջում են քննութիւն, պահանջում են ցոյց տալ իրանց մեղքերը։ Էջմիածինը սովորականի պէս ձգձգում էր։ «Լաւ, մենք կը տանք ձեզ վկայաթուղթ, որ չիտակ ծառայել էք ձեր պաշտօնի մէջ... կը ջնջենք 3 յօդուածը»։ Բայց երկու պաշտօնեաները քննութիւն էին պահանջում իրանց պատիւը վերականգնելու համար։ Էջմիածինը քննիչ նշանակեց Մխիթար վարդապետին, բայց նա չեկաւ։ Անցան ամիսներ, վերջապէս թեմակալ հաստատվեց Գառնակերեան եպիսկոպոսը։ Նա քննութիւն բացեց եւ արդարութիւնը երեւան ելաւ։ Արդար ճանաչվեցին բոլոր արտաւորված պաշտօնեաները, նրանք նորից գործի հրաւիրվեցին եւ լրիւ ստացան իրանց հասանելի ութ ամսվայ ռոճիկը։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Բանանց գիւղ, յունվարի 16-ին

Ներերս մեր գիւղում վախճանվեց մի անտուն անտէր խեղճ ծերունի, Բանանցում ու նրա շրջանի գիւղերում յայտնի «Ջ ո ւ ն ա մ Մ ա թ ի ն»։ Հրապարակական գովասանքի ու շնորհակալութեան արժանի է գիւղացիների մարդասէր վերաբերմունքը դէպի այդ խեղճը թէ նրա կենդանութեան եւ թէ նրա մահվան ժամանակ, մի բան, որ բնորոշ կարող է համարվել հայ գիւղի համար։

Երկար տարիներ շարունակ նրա հարկը Բանանցի հասարակութիւնը վերցնում էր իր վրա, խնամում էր նրան նրա ծերութեան օրերում, ամեն օջաղի ու ամեն սուփրի «ղրաղի» Մաթին իր համար միշտ տեղ ունէր։ Մաթիի թաղումն էլ հասարակութիւնը վերցրեց իր վրա, հանգանակելով այդ նպատակի համար 50 րուբլի։ Մինչ սովորական բան է փարթամ քաղաքներում տեսնել անտուն-անտէր խեղճին մեռած երբեմն փողոցում կամ քարվանսարայի ցուրտ նկուղում, որ յաճախ օրերով անթաղ է մնում, որին, իբրեւ մի լէշ, «դրօգի» մէջ են շպրտում կամ վարձովի մշակների ձեռքը տալիս տանելու հողը ձգելու համար, որին «Հ ա յ ր ե ր» անուն կրող արժանապատիւները յաճախ չեն արժանացնում վերջին յարգանքին, յուղարկաւորութեան, «սեւ փողի» բացակայութեան պատճառով,—հայ գիւղում այդպիսին իր վերջին օրը եւս յարգվում է իբրեւ մ ա ր դ, որին պերճախօս ապացոյց կարող է ծառայել Մաթիի թաղումը, որը կատարվեց պատարագով, գիւղի հոգեւորականութեան ու ամբողջ հասարակութեան ներկայութեամբ. նրա համար հանգանակված փողի մնացորդով պէտք է քար դնվի նրա գերեզմանի վրա ի նշան յարգանքի դէպի այն խեղճ անտուն-անտէր Ջունամ Մաթին, որ իր ամբողջ կեանքում ոչ մէկի մի մազի չափ անգամ մնաս չէ տուել, ոչ մէկի չարիք չէ արել, ոչ մէկին «մի բերան գոնէ չոռ» չէ ասել ու շատերին օգնել է իր աշխատանքով, իր «հալալ ամագով»։

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բագու, յունվարի 3-ին

Խնդրեմ, ճշմարտութիւնը վերականգնելու համար, տպել հետեւեալ հերքումս։

Դեռ մեր պաշտօնավայրում, Պարսկաստանում էինք, երբ զանազան թերթերում տպվում էին մեզ դատապարտող եւ անուանարկող թղթակցութիւններ։ Անցանք Կովկաս, մեր դատաւորներն էլ սկսեցին իրանց յօդուածները ուղարկել Կովկասի հայ օրաթերթերին, սկզբում մի փոքրոցային թերթին, իսկ յետոյ «Մշակին», որի մէջ, օգտվելով կեղծ անուան տուած յարմարութիւններից, հրապարակ են գալիս մի եւ նոյն մեղադրանքներով, բայց համեմատ մի քիչ ուրիշ կերպ...

Խօսքս պ. Մ.-Ս.-ի Սալմաստից գրած նամակի մասին է, որ տպվեց «Մշակի» № 1-ում։ Այդ նամակում պ. Մ.-Ս. ասում է. «Ժողովուրդը խիստ սառն կերպով է վերաբերվում դէպի ուսումնարանը՝ ուսուցիչներից մի քանիսի տգեղ արարքների շնորհիւ։ Իբրեւ «օրինակ» ու «իդէալիստ ուսուցիչների գործունէութեան մի նմուշ» նկարագրում է մեր «տգեղ արարքը» հետեւեալ փաստերով. «պարոնը շաբաթներով չէր գնում դպրոց եւ ոչ մի հոգ չէր տանում մանուկների կրթութեան վրա։ Շարունակելով այդ կերպ իր պաշտօնը մինչեւ ներկայ տարվայ մարտ ամսի սկիզբը, նա, հակառակ իր կապած պայմաններին, թողնում է դպրոցը եւ հեռանում է Սալմաստից, առանց նոյն իսկ հոգաբարձութեան իմաց տալու, բայց նախ քան հեռանալը նա չէ մոռանում իր ամբողջ ռոճիկը ստանալ հոգաբարձութիւնից»։ Թող ընթերցողները այժմ լսեն իմ առարկութիւնները։ 1) Մենք «շաբաթներով» դպրոցից չենք բացակայել եւ ոչ մի ժամ անգամ առանց յարգելի պատճառի։ Ընդհակառակն, այդ կողմից մենք արել ենք այն, որ մեզ պատիւ կարող է բերել։ Չը յիշենք աշակերտական գրօսանքների, ճանապարհորդութիւնների, ազատ ընթերցանութեան համար նուիրած մեր ժամերը, որ նոյն իսկ կիրակի օրերն անգամ ինքնաբերաբար զոհում էինք աշակերտների բարոյական կրթութեան եւ մտաւոր զարգացման համար. յիշենք հետեւեալ երկու փաստերը,—անցեալ տարի 3 ամիս մենք վերակացուի պաշտօն վարեցինք, օրական մի ժամ էլ դաս վերցրինք, մինչեւ որ դեկտեմբերի 1-ին հոգաբարձութիւնը վարձեց մի վերակացու։ Իսկ նախորդ տարին դպրոցը փակեցինք ոչ թէ մայիսի 30-ին, այլ յունիսի 27-ին դպրոցական հանդէսով։ 2) Ինչպէս կարելի է համոզվել Փայաջուկի հոգաբարձութեան մեզ տուած ստացագրից, որ ոչ «նախ քան մեր հեռանալը», այլ հեռանալու օրն անգամ մեր ամբողջ ռոճիկը լրիւ չենք ստացել, այլ բաց է մնացել 30 թուման (60 րուբլի)։ 3) Մենք «մարտ ամսի սկիզբին» չենք հեռացել Սալմաստից, այլ մայիսի 11-ին։ 4) Մեր Սալմաստից մեկնելու օրը մեզ ճանապարհ դնելու համար մինչեւ «Փայաջուկի կալերը» մեզ ուղեկցում էին հոգաբարձութեան նախագահը եւ երեք անդամները, իսկ իմ մեկնելուց առաջ եկեղեցու բակում եղաւ հոգաբարձական ժողով մեր հաշիւները քննելու եւ փակելու համար։

Ուրեմն մեր մասին պ. Մ. Ս.-ի տուած լուրերը բոլորը սարքովի եւ կեղծ են։ Իսկ ինչ վերաբերում է սալմաստեցու դէպի դպրոցը սառն վերաբերվելուն, պէտք ասենք, որ դրա պատճառը անցեալ տարվայ «ուսուցիչներից մի քանիսի տգեղ վարմունքը» չէ. ընդհակառակն, անցեալ տարի առաջին անգամն էր, որ Սալմաստը, շնորհիւ Ատրպատականի ներկայ առաջնորդի ջանքերի, ունեցաւ մի մեծ խումբ միջնակարգ կրթութիւն ստացած ուսուցիչների։ Սալմաստը դրանցից չը զզվեց, այլ նրանք զզվեցին Սալմաստի ապականված մթնոլորտից եւ թողին, հեռացան։ Իսկ ժողովուրդը դպրոցից սառած չէ, այլ այնքան ճնշված է մի քանի ձրիակերների բռնութեան տակ, որ հնարաւորութիւնից անգամ զրկված է իր որդու կրթութեան համար մտածելու։

Արտակ Դարբինեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր ընթերցողներին յայտնի է այն կռիւը, որ մղվում է Կաղզւանում ամբողջ հասարակութեան եւ պ. Զաքար Զանփօլադեանի մէջ եկեղեցու շինութեան առիթով։ «Մշակում» իր ժամանակին տպվեցին այդ հարցին վերաբերեալ թղթակցութիւններ Կաղզւանից եւ նամակներ խմբագրութեան պ. Զաքար Զանփօլադեանի եւ Եղիշէ վարդապետ Մուրադեանի։ Պ. Զաքար Զանփօլադեան, չը բաւականանալով իր ընդարձակ հերքումով, որ ամբողջապէս տպվեց «Մշակում», դատ է սկսել «Մշակի» երկու թղթակիցների՝ պ.պ. Ա. Տէր-Ներսէսեանի եւ Մ. Ղազարեանի դէմ, մեղադրելով նրանց պատժագրքի 1535 յօդուածի 2-րդ մասով, մամուլի մէջ նրան զրպարտելու համար։ Երէկ, յունվարի 31-ին, պ.պ. Զաքար Զանփօլադեան եւ պ. Ա. Տէր-Ներսէսեան հրաւիրված էին Թիֆլիսի հաշտարարական երկրորդ բաժնի քննիչի մօտ գործը հաշտութեամբ վերջացնելու համար։ Պ. Զ. Զանփօլադեանի կողմից ներկայ էր երդուեալ հաւատարմատարի օգնական Զայկօվսկի, իսկ պ. Ա. Տէր-Ներսէսեանի կողմից երդուեալ հաւատարմատար Տիգրան Ցովհաննիսեան։ Երկու կողմն էլ յայտնեցին, որ չեն ցանկանում գործը հաշտութեամբ վերջացնել, այնպէս որ գործը կընկնի դատարան։ Ինչ վերաբերում է պ. Մեսրոբ Ղազարեանին, նրա փոխարէն պ. Զանփօլադեանի գանգատում յիշատակված էր Մկրտիչ Ղազարեան, որին եւ ուղարկվել էր ծանուցագիրը։ Պ. Զանփօլադեանի հաւատարմատարը գրաւոր յայտարարութիւն տուեց այդ մասին եւ այդ հարցը յետաձգվեց առժամանակ։

—

ծոցը այդ հսկայ չիրիմի տակ։ Բայց հսկայ կեփազն իսկ չէ կարող իր տակը պարտկել այդպիսի մի հսկայական եղեռնագործութիւն...

Քահանայի ձեռքը ուսիս դիպչելով՝ սթափեցրեց ինձ. նա իր գործը վերջացնելով մօտեցել էր ինձ։

—Ի՞նչ ես մտածում։

—Եթէ տասն եւ չորս տարեկան է մեռել, ուրեմն քանի տարեկան են նրան մարդու տուել, պատասխանեցի ես, դրանով հասկացնելով նրան մտածողութեանս առարկան։

—Չորս տարի «կողակցութիւն» է արել։

Բոլորովին ապշեցի։ Տասը տարեկան երեխան որտեղ—ամուսնական կեանքը որտեղ...։

Տէր-հայրը զգջաց, որ ինձ առաջարկեց այս պտոյտը, որը փոխանակ սիրտս բացելու, աւելի եւս ճնշեց։ Աչքիցս չէր հեռանում կոպիտ քանդականկարը—տասն եւ չորս տարեկան «կողակիցը» ծաղիկը ձեռքին իր տանջված հայեացքով հետեւում էր ինձ, կարծես ասում լինէր. «Ինչո՞ւ մարդիկ այսպէս անգութ վարվեցին ինձ հետ. ես ուզում էի ապրել, դեռ շատ ապրել... գերեզմանում ցուրտ է եւ մութ. ինչ վատութիւն եմ արել, որ ինձ զրկեցին արեւից եւ լոյսից...»։

Երեկոյեան տանտիրոջս պառաւ մայրը, իմանալով իմ տրտմութեան պատճառը, գլուխն օրօրելով ասաց.

—«Էհ, որդի, աշխարհքի բան է, ինչ որ ճակատներիս գրված է, պիտի կատարվի, ուրիշ հնար չը կայ. երեւի թէ այն խեղճ Ջրատարի ճակատին էլ էդ էր գրված։ Տեսնո՞ւմ ես պառաւութիւնից ինչ օրն եմ ընկել. ամեն օր Աստուած եմ կանչում, որ ինձ տանի իր մօտ. բայց տես, որ ճակատիս գրածը հալա չի թամամել։ Գիտե՞ս քանի՛ տարեկան էի, որ մեծ երէցը (իր քահանայ ամուսինը) ինձ բերեց էս գիւղը... Տարիքը միտս չի՝ էդ երէցի, վարդապետի գիտենալիք է՝ բայց լաւ յիշում եմ, որ պսակիցս մի շաբաթ անցած, մեր գիւղից մեր տան թուրք ծառայի ձեռքով «սաղվաթ» էին ղրկել. երբ որ ծառան յետ էր դառնում, ես յետեւից լաց եղայ, ուզում էի նրա հետ տուն դառնալ։ Մի-մի նորահարս էլ, որ դեռ շատ փոքրիկ է լինում, մի քանի տարի սկեսուրի ծոցումն է քնում՝ մինչեւ հասակն առնելը»...

Պառաւ նանը դեռ շատ դէպքեր էլ պատմեց, որոնցից մեծ մասը ցաւալի հետեւանքներ են ունեցել։

Անչափահաս, երեխայ-աղջկան մարդու տալը մեր գիւղերում խոր արմատացած մի ախտ է դարձել։ Մարդու տալը—գլխից աւելորդ բեռը, մի փոր հացը ռադ է անում. որքան շուտ, այնքան լաւ. աղջիկ ուզողը նոր աշխատող ձեռքեր է աւելացնում գերդաստանին։ Աղէտաբեր հետեւանքները երկու կողմն էլ հանգիստ խղճով «ճակատագրին» են վերագրում եւ անվրդով շարունակում այդ կամաւոր ինքնասպանութիւնը։

Անչափահաս աղջիկներին մարդու տալը շատ վատ ազդեցութիւն է ունենում նրանց բարոյականի եւ նրանց առաջացրած սերնդի ֆիզիքական կազմակերպութեան վրա։

Ծանրութիւնը բացառապէս ընկնում է մատաղահաս կնոջ վրա, որը ամենալաւ դէպքում վաղահաս մահով ազատվում է միանգամից իր ուժերից վեր ամուսնական պարտականութիւններից։ Բայց աւելի սարսափելի հետեւանքներ էլ ունի այդ բարբարոս սովորութիւնը։—Չբերքութիւն, կանացի անբուժելի հիւանդութիւններ թէ հոգեկան, թէ ֆիզիքական եւ այլն աւելի անտանելի են, որովհետեւ այդպիսի դէպքերում տղամարդը առանց խղճահարութեան բերում է տուն մի երկրորդ ապօրինի կին, որի հետ կենակցում է, իսկ նրա առաջին զոհը տան մէջ աղախնի դեր է ստանձնում, գժոխային տանջանքների մէջ քարշ տալով իր թշուառ գոյութիւնը մինչեւ փափագելի մահը։

Հայ գեղջկուհին անտրտունջ տանում է այդ ծանր լուծը, որովհետեւ ուրիշ ելք չունի։ Ո՞ւմ գիժէ, ո՞ւմ գանգատվի եւ ինչպէս։ Բարբ հին ժամանակների նահապետական «ադաթը»՝ ք ի թ կ ա լ ը՝ պինդ փակում է հայ գեղջկուհու բերանը մինչեւ մահ. արդէն բերան բանալ եւ իր ցաւերը պատմելը անպատկառութիւն է համարվում գիւղի մեծ ու փոքրի աչքում...

Նա լռում է, երբ իր կռնից բռնած՝ իր հարազատ ծնողները նրան սպանդանոց են ուղարկում. նա լռում է, երբ գազան-մարդը անխղճաբար յօշոտում է իրան. նա լռում է նոյն իսկ վերջին հոգեւարքին, հլու հնազանդ «ճակատագրի» անօրինութեան...

Բայց խօսում են քարերը...։

Մեր հոգեւոր կառավարութիւնը, որի իրաւասութեան տակ է գտնվում ամուսնութեան պատասխանատու գործը, անշուշտ անտեղեակ չէ այս սոսկալի սովորութեան. բայց նրանից օգնութիւն սպասելը անտեղի է։ Տգէտ տէրտէրները, կաշառակեր գործակալները յօնքը շինելու տեղ աչքն են հանում. իսկ գիտուն, աստուածաբան վարդապետները մեծ գործեր ունեն կատարելու, «սանկ մանր բաներու չեն նայիր»...

Ուսում եւ դարձեալ ուսում, ահա միակ փրկութիւնը։ Նրա կենսատու ճառագայթները թափանցելով խաւարում խարխափող, «ճակատագրի» գերի խեղճ ու կրակ գիւղացու միտքն ու հոգին, կը բանան նրա մտքի աչքերը։ Այն ժամանակ միայն անմառունչ տգիտութեան զոհերը փրկութիւն կը գտնեն։

Դ. Տէր-Զաքարեանց

Երեքշաբթի, յունվարի 30-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում ներկայացվեց Մասընէի «Մոխրատիտիկ» (Cendrillon) օպերան 4 գործողութեամբ եւ վեց պատկերներով։ Այդ օպերան անհաջողութիւն է ունեցել Պարիզի, Միլանի եւ այլ մեծ քաղաքների բեմերի վրա։ Ուրիշ անգամի թողնելով Մասընէի երաժշտութեան մասին խօսելը, պէտք է ասենք, որ մենք չենք յիշում, որ որ եւ է օպէրա այդքան շքեղ դրված լինէր Թիֆլիսի օպերային բեմի վրա։ Տեսարանները այնքան էֆֆէկտով են, որ մարդ կարծես փոխադրվում է մի դիւթական աշխարհ։ Արքունական թատրոնի վարչութիւնը, ասում են, երկու հազար րուբլի է ծախսել այդ օպէրան դնելու համար։ Եւ, յիրաւի, թէ զգեստները եւ թէ բեմի բոլոր սարք ու կարգը նոր են։ Դէկորացիաները հրաշալի են։

—

Բագուի հրկիզեալների օգտին նուիրատուութիւններ են թափվում տեղական «Каспій» լրագրի խմբագրատունը. մինչեւ յունվարի 30-ը լրագիրը ստացել է 4723 րուբլի։ Բացի դրանից նուէրներ ստանում է եւ նաւթարդիւնաբերողների ժողովի խորհուրդը, որի ձեռքում կենտրոնացած է վնասվածներին օգնելու գործը։ Ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագրի թղթակիցը, Ռօտշիլդի ընկերութիւնը յատկացրել է վնասվածներին 30,000 րուբլի։ Բայց այդ բոլորը դեռ մի կաթիլ է ծովի մէջ. Նահանգական իշխանութեան կարգադրութեամբ կազմված յանձնաժողովը, որ պիտի ցուցակագրէր վնասվածներին, վերջացրել է իր գործը. ընդամենը ցուցակագրված են 533 մարդիկ, որոնց ոչնչացած կայքի գնահատութիւնը հասնում է 118 հազար րուբլու։ Ի դէպ, «Каспій» հաղորդում է, որ Տեխնիկական ընկերութեան նիստում, յունվարի 27-ին, մի տեխնիկ ասաց հետեւեալ ճառը. «Մենք, տեխնիկներս, պարտաւոր ենք պահպանել արդիւնագործական շրջանի խաղաղ բնակիչների շահերը, զինվելով մեր գիտութեամբ եւ պրակտիկայով։ Մենք պարտաւոր ենք մշակել արմատական միջոցներ պահպանելու համար այն մարդկանց կեանքն ու գոյքը, որոնք համարեա ոչինչ կապ չունեն նրանց հետ, որոնք այդ արդիւնաբերութեամբ միլիօններ են աշխատում»։ Մխիթարական է, որ «գիտութեամբ զինվածները» գոնէ այժմ զգում են, որ իրանք պ ա ր տ ա ւ ո ր են... Եւ եթէ այդ խոստովանութիւնը միայն ճառի մէջ չի մնայ, այլ հազարաւոր բանուորներին դրական օգուտ էլ կը տայ, այն ժամանակ հրդեհին զոհ գնացած մարդիկ բարերար կը հանդիսանան ապագայի համար հէնց նրանով, որ զգալ տուին «գիտութեամբ զինվածներին» այն, ինչ նրանք պարտաւոր էին զգալ վաղուց, յունվարի 23-ի աղէտից շատ առաջ...

—

«Արեւելքի» մէջ կարդում ենք. «Կիպրոսէն կը գրեն մեզ յունուար 10 (Ն. Տ.) թուականով.— «Պ. Ենովք Բուզաղեանի եւ պ. Գրիգոր Ջանչեանի հոգեհանգիստներէն վերջը, որոնց առաջինը Երուսաղէմի ամենապատիւ պատրիարքին հրամանաւ եւ երկրորդ ինքնաբերաբար կատարուեցան աւկէ առաջները՝ դեկտ. 30, կիրակի օրն ալ տեղի ունեցաւ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի հոգեհանգիստը։ Այս անգամ, տեղւոյս ազգ. որբանոցի վարչութեան խնդրանօք կը կատարուէր պաշտօնը, զի հանգուցեալ սրբազանը մասնաւոր հետաքրքրութեամբ եւ համակրութեամբ վերաբերուած էր միշտ դէպի այս հաստատութիւնը։ Ասկէ առաջ իր կողմէ 400 րուբլի, եւ իր միջնորդութեամբ՝ Սիմֆերոպոլի ազգայիններէն 100 րուբլի նպաստներ ընդունված էին։ Ողբացեալ եպիսկոպոսը քանի մը ամիս առաջ նամակով հաղորդած էր թէ մտադիր է ս. Հայրապետին հրամանը խնդրելու որ հանգանակութիւն կատարէ յօգուտ որբանոցներու, ընդ սրս եւ Կիպրոսի որբանոցին։ Կերեւայ թէ այդ մտքով ուղեւորած էր Էջմիածին, բայց նախախնամութիւնը տարբեր կերպով տնօրինեց։ Հոգեհանգստի պաշտօնը շատ խոր տպաւորութիւն թողուց։ Պատարագէն յետոյ՝ պարագային յարմար քարոզ մը խօսեցաւ Կիպրոսի առաջնորդը, արժ. Պետրոս վարդ. Սարաճեան, որ Երուսաղէմի ս. պատրիարքին արտօնութեամբ՝ որբանոցի տեղական վարչութեան նախագահն է։ Արժ. քարոզիչը գեղեցիկ կերպով պատկերացուց հանգուցեալ եպիսկոպոսին արդիւնաւոր կեանքը եւ զայն իբր օրինակ ներկայացնելէ յետոյ՝ օրհնեց անոր յիշատակը սրտայոյզ շեշտերով։ Պաշտօնը կատարուեցաւ տաճարին մէջտեղ, մասնակցութեամբ որբանոցի սաներուն, որոնք վայելուչ համազգեստով եւ մոմ ի ձեռին կանգնած՝ ամենայն գիտակցութեամբ կըմբռնէին կատարված պաշտօնի նշանակութիւնը յատկապէս զիրենք պատսպարող հաստատութեան համար։ Խորէն եպիսկոպոս Ստեփանէ՝ տարիներ առաջ իսկ մէկը եղած է անոնց՝ որոնք քաջալերած են Կիպրոսի կրթական ձեռնարկին գաղափարը։ Իր վերջին տարիներու աննպաստ պարագաները թոյլ չէին տուած որ աւելի կարեւոր աջակցութիւն ընծայէ գործին. սակայն եւ այնպէս, իր մահը մեծ կորուստ մը կը նկատուի այս հաստատութեան համար։»

—

«Рус. Вѣд.» լրագրում կարդում ենք. «Վաղուց արդէն յայտնի էր, որ Ֆ. Ի. Պաւլենկօվ ձեռք էր բերել Գերցեն—Իսկանդէրի գրուածքները հրատարակելու իրաւունքը, բայց նա չը կարողացաւ անձամբ կատարել այդ գործը։ Այժմ հանգուցեալ հրատարակչի կտակակատարները, որոնց վրա հանգուցեալի կամքով պարտականութիւն է դրած վերջացնել նրա սկսած գրական ձեռնարկութիւնները, պատրաստում են տպագրութեան համար «Ա. Ի. Գերցէնի ընտիր գրուածքները»։ Չէ կարելի չուրախանալ, որ ռուսաց ամենատաղանդաւոր եւ տրամիտ գրողներից մէկի գրուածքները մատչելի կը դառնան ընդհանրութեան»։

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Բաթումից. «Յունվարի 30-ին հրդեհ ընկաւ իգական գիմնազիայի շէնութեան մէջ. ամբողջ շէնութիւնը այրվեց. շատ քիչ բան է ազատված»։

—

Մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են Թէօդոսիայից, թէ քաղաքային խորհուրդը որոշեց գնել եւ հասարակական սեփականութիւն դարձնել այն տունը, ուր ապրում էր Այվազովսկին։

—

Այսօր, փետրվարի 1-ին, Թիֆլիսի երկրորդ հաշտարար բաժանմունքի առանձին մասում (Մողնու եկեղեցու դէմ) նշանակված է Կարս քաղաքի բնակիչ յայտնի խարդախիչ Մելիքսեթ (Ցարութիւն) Զուվալաքեանի գործը, որը կեղծ կերպով զանազան ժամանակներ փողեր է ժողովել այս կամ այն ընկերութեան եւ խմբագրութիւնների կողմից։

—

Զրահեղձութիւնից ազատող ռուսաց կայսերական ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել, որ վարչութեան մէջ ունեցած տեղեկութիւններով՝ անցեալ 1900 թւին Կուր գետում, Թիֆլիս քաղաքի շրջանում, ազատված են ընդամենը 27 մարդ։ Այս թւից 16 հոգու ազատել են ընկերութեան ազատարար հիմնարկութիւնները, իսկ 11 հոգու կողմնակի անձինք։ Խեղդվել են 11 հոգի։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այսպիսի դաժան ձմեռ շատ քիչ է պատահում, դաժան իր խստութեամբ, դաժան բազմատեսակ եւ բազմաթիւ հիւանդութիւններով։ 1900 թւի ամառը չը տեսնված ամառ էր. անընդհատ տեղացող անձրեւների պատճառով չոքի երես չը տեսանք, օգոստոսի վերջերում սարերը ձիւնով ծածկվեցին, շատ տեղեր չը հնձած արտերը ձիւնի տակ մնացին։ Հոկտեմբեր եւ դեկտեմբեր ամիսները անցան բոլորովին տաք, ազատ անձրեւներից եւ ձիւնից եւ այսպիսի անբնական եղանակներից յետոյ յանկարծ յունվար ամսին եկաւ մասնաւոր չափով ձիւն եւ սկսվեցին սարսափելի սառնամանիքներ, որոնք տեւում են ահա ամբողջ ամիս։ Այսպիսի փոփոխական եւ անբնական եղանակները, շատ հասկանալի է, որ պիտի նպաստէին հիւանդութիւնների բազմանալուն։ Տարափոխիկ հիւանդութիւններ երեխաների մէջ, տիֆ ամեն տեղ, ինֆլուէնցա առանց բացառութեան. սարսափելի էր այս դրութիւնը, մի դրութիւն, որի մասին գաղափար կազմելու համար բաւական է ի նկատի ունենալ, որ անցեալ շաբաթ 28 հազար բնակիչ ունեցող Երեւանում հաշւում էր 4000 հիւանդ, ուրիշ խօսքով ազգաբնակութեան 15 տոկոսը հիւանդ էր, թէեւ շատերը ոտքի վրա էին տառապում։ Այս բոլորի վրա աւելացրէք մթերքների թանգութիւնը, ածուխի եւ վառելափայտի չը տեսնված գները, այն ժամանակ հասկանալի կը լինի մեր քաղաքի ազգաբնակութեան դրութիւնը, մանաւանդ չքաւոր եւ աշխատող ձեռքերից զուրկ ընտանիքների կացութիւնը, որին հանդիսատես լինելու համար քարէ սիրտ է հարկաւոր»։

—

ԱՂԴԱՇԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարվայ դեկտեմբեր ամսին Նուխու յաջորդը, Աղդաշ գալով, բացատրեց այստեղի հասարակութեանը մի աղօթատուն եւ քահանայ ունենալու անհրաժեշտութիւնը։ Աղօթատնից զուրկ հայերը սիրով ընդունեցին յաջորդի առաջարկութիւնը եւ հէնց նոյն օրը մի ժողով կազմելով՝ վճռեցին ամսական մի որոշ գումար տալ մի քահանայի եւ մի տիրացուի. բացի դրանից քահանան ստանալու է բոլոր ծիսակատարութիւնների վարձը առանձին։ Նոյն ժողովում ընտրվեցին եւ երեք հոգաբարձուներ, որոնք պէտք է հոգ տանեն հասարակութեան այդ վճիռը իրագործելու համար։ Այն օրից, որ յաջորդը հեռացել է այստեղից, դեռ ոչ մի կարգադրութիւն չէ եղել հոգեւոր իշխանութեան կողմից, եւ ժողովուրդը մնում է կրկին առանց աղօթատան եւ քահանայի։ Դարձնում ենք հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը այդ հանգամանքի վրա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունվարի 21-ին

Յունվարի 20-ին Թաւրիզի լսարանում դասախօսութիւն եղաւ քահանայական խնդրի մասին. դասախօսը առաջ բերեց քահանաների ապահովութեան հարցը, որ քահանաները պիտի լինեն թոշակ ստացող, ինչպէս ուրիշ պաշտօնեաները։ Առաջարկվում էր վեց դասակարգի բաժանել Թաւրիզի ամբողջ հայ հասարակութիւնը, իսկ աղքատներին ազատել տուրքից։ Աւելորդ եմ համարում մէջ բերել դասակարգերի տուրքերի աստիճանները, միայն այսքանն կասեմ, որ գոյանում է 3,000 րուբլի, իսկ այդպիսի մի գումարով կարելի է ապահովել երեք քահանայ եւ եկեղեցու զանազան ծախքերն էլ լրացնել։

Ինչու չօգտվել այս օրինակելի եւ պատուաբեր հանգամանքից։ Այս համակրելի առաջարկութիւնը, պէտք է ասած, որ ներկայ եղող հասարակութեան կողմից քիչ թէ շատ ընդունելի դարձաւ, միայն պահանջում էին, որ քահանաները այդ պայմաններում աւելի եւս լինեն կրթված եւ բարոյական։ Գեղեցիկ առաջարկ, օրինաւոր պահանջ։ Հազիւ հազ կարելի եղաւ այդ խնդիրը պատրաստ հողի վրա դնել Պարսկաստանում եւ շատ ուրախալի է, որ այս հանրօգուտ առաջարկը իրագործվելու է աւելի շուտ Պարսկաստանում, քան նոյն իսկ Կովկասում, որտեղ երկար ու ձիգ տարիների ընթացքում անհագին խոչընդոտների եւ թիւրիմացութիւնների է հանդիպում ու թերի մնում։

Մօտերս կարդացի «Новое Обозрѣніе» լրագրի № 5588-ի մէջ մի շատ տարօրինակ լուր. որպէս թէ դեկտեմբերի 24 եւ 25-ին Թաւրիզում ձիւն եկաւ մօտ $2\frac{1}{2}$ արշին, շատ տներ ծածկվել էին ձիւնի տակ, որ եւ մեծ դժուարութեամբ կարողացան ազատել մարդկանց, իսկ չուկան փակ մնաց մօտ մէկ շաբաթ։ Լուրը ամբողջովին, սկզբից մինչեւ վերջը, սխալ էր եւ մեզ, տեղացիներիս, միայն ծիծաղ պատճառեց։

Ի. Տէր-Յարութիւնեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իրերի դրութիւնը Սպանիայում չափազանց լուրջ է։ Աստուրիայում յայտարարված է պաշարման դրութիւն. Գիխոնում բանուորական ընդհանուր գործադուլ է. բոլոր տեղական լրագիրները դադարեցրած են. երկաթուղային երթեւեկութիւնը Մադրիդ-Լիսաբոնեան գծի վրա ընդհատված է, որովհետեւ երկաթուղու ծառայողները գործադուլ են արել։ Վալենսիայում, ժամերգութեան ժամանակ, տեղի ունեցան հակակղերական ցոյցեր։ Ամբոխը, անցնելով եզուիտների եկեղեցու մօտից, աղաղակում էր. «Կեցցէ ազատութիւնը, թող կորչի յետադիմութիւնը, թող կորչեն եզուիտները»։ Մադրիդում եւ գաւառական քաղաքներում հակակղերական շարժումը արտայայտվում է ոգեւորված ցոյցերով ի պատիւ Գալդօսի, «Էլէկտրա» դրամայի հեղինակի, որի մէջ նկարագրված են եզուիտականութեան բացասական կողմերը։ Պահպանողական եւ կղերական մամուլը պահանջում է, որ ներկայացումների ժամանակ միշտ ներկայ լինեն ժանդարմներ եւ ոստիկանական գործակալներ հակակղերական ցոյցերը ճնշելու համար։

—Անգլիական լրագիրները զբաղված են այժմ այն հարցով, թէ ինչ տիտղոս պէտք է կրէ նոր թագաւորը։ Նրանք համարում են, որ թագաւորի նախկին տիտղոսը—«Թագաւոր Մեծ-Բրիտանիայի եւ Իրլանդիայի, պաշտպան հաւատոյ, կայսր Հնդկաստանի»—չէ համապատասխանում իրերի այժմեան դրութեան, որովհետեւ նրա մէջ չեն յիշվում ոչ Կանադան, ոչ Աւստրալիան եւ ոչ Կապի գաղթականութիւնը։ Այնուամենայնիւ բոլոր լրագիրները համաձայն չեն միմեանց հետ այն հարցում, թէ ինչպէս պէտք է փոխվի տիտղոսը։ Ոմանք բաւական են համարում այս ձեւակերպութիւնը. «Կայսր Մեծ-Բրիտանիայի եւ Հնդկաստանի», միւսները անհրաժեշտ են համարում աւելացնել. «Թագաւորական նախագահ Աւստրալիայի եւ Կանադայի»։ Այս վերջին տիտղոսը յարմարաւոր է համարվում նրա համար, որ չէ հակասում «Աւստրալիական հանրապետութիւն» անուան, որ պաշտօնապէս ընդունել է աւստրալիական գաղութների նոր կազմակերպված ֆեդերացիան։ Աւելացնենք, որ նոր թագաւորի անունն անգամ յարուցանում է տարակուսանքներ. պէտք է արդեօք կոչվի նա Էդուարդ VII, թէ Էդուարդ I. Այս հարցը, որ իսկապէս մի դատարկ բան պիտի համարվէր, հերթական դարձաւ այն պատճառով, որ շօտլանդական ատրիճանաւորներից մէկը հրաժարվեց հաւատարիմ հպատակութեան երդումն տալ Էդուարդ VII-ին, առարկելով, թէ նա, իբրեւ շօտլանդական թագաւոր, պէտք է կոչվի Էդուարդ I։

—Այն պատիւները, որոնք տրվեցին Լոնդոնում Վիլհէլմ II-ին՝ նրան Գերմանիա ճանապարհ գցելուց առաջ, մի բացառիկ երեւոյթ են կազմում օտարերկրեայ թագաւորներին Անգլիայում ցոյց տուած յարգանքների մէջ։ Լրագիրները խօսում են նրա մասին հիացմունքով։ «Times» նուիրեց նրան մի առաջնորդող, որի վերնագիրն է՝ «Veni, vidi, vici»։ Միւս լրագիրները գովեցին Լոնդոնի ազգաբնակութեանը յայտարարագրերով, որոնց մէջ հրաւիրում էին ցոյցեր կազմակերպել ի պատիւ գերմանական կայսրի։ «Daily Mail» գրում է. «Ոչ ոք, որ մի անգամ չփումն է ունեցել կայսրի անձնաւորութեան հետ, չէ կարող խուսափել այն զօրեղ մագնիսական ազդեցութիւնից, որ ունի կայսրը նոյն չափով, որ չափով ունէին նրա մեծ նախորդ Ֆրիդրիխը կամ Նապոլէօն I-ը։ Իբրեւ պետական անձն, նա առաջին տեղերից մէկն է բռնում Եւրոպայում։ Ինչ վերաբերում է նրա զինուորական յատկութիւններին, երեւի, հէնց առաջին պատերազմը ցոյց կը տայ, թէ որքան բարձր են նրանք։ Որպէս զի անշնորհակալ չը լինենք, մենք պէտք է նրան այնպիսի ընդունելութիւն ցոյց տանք, որին մինչեւ այժմ չէ արժանացել ոչ մի թագաւոր օտար ազգի կողմից»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

30 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 30-ին Թագաւոր Կայսրը այցելեց ծովային կադէտների կորպուսը։

Յունվարի 30-ին Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորօվնա եւ Հէսսէնի Մեծ Դքսուհին այցելեցին բժշկապետ Խօրնի օրթօպէդիական բուժարանը։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Վերջին օրերս Թագուհու ջերմը դադարեց, բայց նա այնուամենայնիւ դեռ պէտք է մնայ անկողնում։

ՊԱՐԻԶ։ Գեներալ Բուարօն զեկուցանում է, որ յունվարի 28-ին տեղի ունեցաւ Պէկին-Պաօտինֆու երկաթուղիական գծի բացումը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ինչպէս Դէլագօայից հաղորդում են, Տրանսվաալի հիւսիսում տեղացիներն ապստամբվեցին բօէրների դէմ։

ԿՎԻՆՍՏԱՈՒՆ։ Գեներալ Բրաբանտ ժողովում ճառ արտասանեց, որի մէջ առանձնապէս պնդում էր այն բանի վրա, թէ ագարակատէրերը պարտաւոր են զինուորական ծառայութիւն կատարել որպէս կամաւորներ՝ կօլօնիան պաշտպանելու համար։ Շատ զինուորներ գալիս են գրվելու։

ՎԻԼԼԻՍՏՕՈՒՆ։ Գնդապետ Դէլիլի զօրասիւնը Կալվինիից եկաւ այստեղ, անցնելով 72 մղոն։ Բօէրները առաջ են գնում դէպի Վանվիկսֆլէյ։

ՇԱՆԳՀԱՅ։ Նանկինից հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Լիւխունգչանգ մի յիշատակագիր մատուցեց կայսրին ֆինանսական բարենորոգումների մասին, որի մէջ նա առաջարկում է, նախ՝ վերացնել լիկինեան տուրքի բոլոր կէտերը երկրի ներսում եւ այդպիսի տուրքը առնել օտար երկիրներից նաւահանգիստները ներմուծած ապրանքներից օտար պետութիւնների մաքսային հիմնարկութիւնների միջոցով. երկրորդ՝ նշանակել առանձին առեւտրական կոմիսար, որը լաւ ծանօթ լինի օտար երկիրների առեւտրական պայմանների հետ եւ բնակութիւն ունենայ Շանղհայում. երրորդ՝ դրամահատական տներ շինել մէկ դօլլար արժողութեամբ դրամ կտրելու համար, եւ չորրորդ՝ մաքսային սակագինը բարձրացնել։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Լուր է պտտում, որ ուրբաթ գիշերը Դէվէտ անցաւ Օրանժեան գետը Նորվալսպօնտից մի քանի մղոն դէպի հիւսիս։ Բրիտանական հինգ զօրաբաժիններ նրան հալածում են, Բոլոր գետանցքերը պահպանվում են. ամեն գետանցքներում ականներ են դրված։

31 յունվարի

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական այրի կայսրուհու

առողջական դրութիւնը չատերը չատ ծանր են համարում։

ՎԻԷՆՆԱ։ Այստեղ տեղի ունենալիք Թաղման հանդէսը՝ Միլանին արքայական պատիւներ տալով, վերջնականապէս նշանակված է ուրբաթ եկեղեցական հանդէսից յետոյ։ Արտակարգ գնացքը, որի մէջ կը գտնվեն նաեւ պալատական բարձր պաշտօնեաները, Թագաւորի նըշխարքը կը տանի Կրուշէդօլեան վանքը։

ՑԷՏԻՆԻԷ։ Չէրնօգօրիական իշխանը ցաւակցութիւն եւ եղբայրական համակրութիւն յայտնեց սերբիական Թագաւորին։

ՎԻԷՆՆԱ։ Պատգամաւորների ժողով։ Երցհէրցօգ Ֆրանց Ֆէրդինանդի յայտնի յայտարարագրի առիթով՝ ժառանգական իրաւունքներից զրկել այն երեխաներին, որոնք կարող են ծնվել կոմսուհի Խօտէկի հետ ամուսնութիւնից, Կրամարժ յայտնեց չէխերի անունից, Թէ չէխերը բացասում են րէյխսրատի ձեռնհասութիւնը այդ գործում եւ պահանջում են այդ ձեռնհասութիւնը ճանաչել չէխ ժողովրդի ներկայացուցիչների կողմը, այդ պատճառով Գրօսի առաջարկութեան ձայնատւութեանը՝ յանձնելու այդ հարցը առանձին յանձնաժողովին, իրանք չեն մասնակցի, որից յետոյ մինիստր-նախագահը ճառ արտասանեց, որի մէջ առաջարկեց պատուիրակներին վերադառնալ պարլամենտական զբաղմունքներին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Գանձարանը ռուսաց ռաֆինադ շաքարը ենթարկեց կօմպէնսացիօնական հարկին՝ պուդից 64 կոպէկ։

ՄԱՍԷՐՈՒ։ Անգլիացիները գրաւեցին Ֆիկսբուրգ առանց նշանաւոր դիմադրութեան հանդիպելու։ Անգլիացիները հեռացան Վեպէներից, որը գրաւեցին բօէրները։

ԿՕԼԷՍԲԷՐԳ։ Յունվարի 28-ին բօէրների զօրաբաժինը երեւաց Գամէլֆօնտէնում, ուր տեղի ունեցաւ կռիւ. մէկ անգլիացի սպանվեց։ Բօէրները մեծ Թւով կանգնած են Դօնկէրպօրտի ետեւը գտնվող բարձրութիւնների վրա, Կօրվալպսօնտից դէպի հիւսիս։

ԼՕՐԷՆԶՕ-ՄԱՐԿԻԶԷ։ Ջերմի ժամանակը հասնելու օրից մեծ ուժով սկսվեցին հիւանդութիւնները. հիւանդների մշտական տոկոսը բարձր է կանգնած քաղաքի բնակիչների մէջ։ Անգլիացիների մէջ մահացութեան չատ դէպքեր եղան. չատ ծառայողներ ուղարկված են «Օրկան» հիւանդանոցը։ Համարեա ամեն օր Կամատիպօրտից նաւեր են գալիս հիւանդներով, որոնց փոխադրում են «Օրկան» նաւի վրա, որը արդէն լցված է։ Այստեղ փախած բօէրների մէջ եւ նոյնպէս մահվան չատ դէպքեր կային։

ԲԷՐԼԻՆ։ Վալդերզէէ հաղորդում է Պեկինից, որ եգէրների վաշտը լեռնային Թնդանօթներով, որ ուղարկված էր Ենկին տեղը, այսօր վերադարձաւ, որովհետեւ նպատակին հասնելու համար հեծելազօրքը բաւական է։

ՊԱՕՏԻՆԳՖՈՒ։ Նորերս զօրաբաժիններ են ուղարկված՝ մշտապէս գրաւելու համար հինգ քաղաքներ, որոնք գտնվում են գերմանացիներին գործողութիւնների շրջանում. իւրաքանչիւր քաղաք գրաւված է ռոտայով՝ բնակիչներին կողոպուտներից եւ հարստահարութիւնից պաշտպանելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Թագաժառանգ Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրօվիչ յունվարի 29-ին ճանապարհ ընկաւ Լօնդօնից։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Իշխան Գէօրգի Կանտակուզէն հրաժարվեց մինիստրութիւն կազմելու որ եւ փորձ անելուց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԲՈՒԺՈՂՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Ջիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և ներարդային հ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ն. Ն. Ռօսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. Ներարդային (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.

Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առաքելեան—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
1901 ԹՒԻ
Բաժանորդագրութիւնը

„ՄՈՒՐՃ“

գրական, հասարակական եւ քաղաքական ամսագրի

—

Խմբագրութեան անդամներն են՝
պ. պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանում	տարեկան	10 ր.
»	կէս տարին	6 »
»	1 ամսվան	1 »
Արտասահման	տարեկան	30 ֆրանկ,
»	կէս տարին	18 »
»	1 ամսվան	3 »

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել Թիֆլիսում—խմբագրատանը (Երեւանեան հրապարակ, տ. Խարազեանի)։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журн. «Мурчъ»:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtch».

Ծանօթութիւն. 1900 Թվի այն բաժանորդները, որոնք յետ չեն ստանալ այդ Թվի բաժանորդագնի մնացորդը (5 ր.), բայց եւ չեն ուղարկի 1901 Թ. երկրորդ կիսամեակի 5 րուբլին, կը ստանան «Մուրճ» միայն մինչեւ յունիս ամիսը։—Ով դժուարանում է տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ր., մարտի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.)։

Հրատարակիչ եւ ժամ. խմբագիր՝
Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Հ Ր Ա Ւ Է Ր

Կուկիայ Թանգոյեանց ս. Աստուածածնի եկեղեցւոյ երէցփոխ պ. Սարգիս Ղամազեանցի երէցփոխութեան ժամանակամիջոցը լրացած լինելու պատճառով, փետրվարի 4-ին, կիրակի օրը, ս. պատարագից յետոյ, ուղիղ ժամը 12-ին, լինելու է ժողով նոր երէցփոխ ընտրելու, ուստի պատիւ ունիմ սրանով հրաւիրել պ.պ. ծխականներին՝ ներկայ լինել յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝
1—1 Գրիգոր աւագ ք. Մանդակունի

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

1889, 1890, 1891, 1892, 1893 Թ. ամփոփ տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զիջումով։

Դիմել—Վիլեամինօվսկայա № 24, գրասենեակ Ա. Զարգարեանցի եւ Փ. Վարդազարեանի։

(չ. չ.) 1—20

Վաճառվում է արտասահմանեան եւ տեղական

ԲՕՃՕԺԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻՅ

զանազան տեսակի եւ յայտնի ֆիրմաների ՍԵՐՄ, կովկասեան չերամապահական կայարանի սպիտակ փաթեթներով։ Ցանկացողները վաղօրոք պիտի դիմեն. Тифлисъ, Галусту Галустьяну. 6—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ սրվակը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է Թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուճերը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագւում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ փոստով։
50—100

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ

նկարչական-գեղարուեստական արհեստանոցը

ընդունում է սրբոց պատկերների, կենդանագրերի, ոսկեզօծի, ցուցանակի, դէկօրացիաների, ներկարարական աշխատանքների պատուէրներ եւ տալիս եմ նկարչութեան դասեր։

Պ. Պ. ԲՕԳԱՏԻՐԵՕՎ

Արհեստանոցը գտնվում է Վերայի զառիվայրի վրա, Կօրգանօվսկայա փողոցի անկիւն, տուն Մերուրնուծովի։ 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 8—10

Ուրբաթ, փետրվարի 2-ին,

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

կը տրվի

ԿՕՆՑԷՐՏ

Յօգուտ Թիֆլիսի 2-րդ էժանագին գրադարանի եւ նրա բաժանմունքի Հաւլաբարում։

Կօնցէրտին կը մասնակցեն՝ Իւլիա Ի. Սպենդիարեան, Ն. Ա. Տուլաեվա, Վ. Մ. Ամիրաջիբի, Մ. Տ. Վասիլիեվ, Էնրիկօ Բրօջի, Ա. Դ. Բուչ, Կ. Ա. Բլատօվ, Ա. Ս. Զմշկեան եւ Օ. Պ. Միխէեվա։

Սկիզբը 8½ ժամին երեկոյեան

Տոմսակները՝ 4 րուբլուց մինչեւ 1 րուբլի. կարելի է ստանալ Էնֆիաճեանցի խանութում, իսկ կօնցէրտի օրը—ժողովարանի չվէյցարից։ 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանօնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, յունվարի 31 (փետրվարի 13)—շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, կապիտան ԲԻԱՆԿԻ. Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորական պայմաններով։

Ամիսը մի անգամ կանօնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար Թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՒՈՒՄ—եղբ. Վ. եւ Ի. Մուխթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկօվի, № 27։ ՆՕՎՕՌՕՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (և. հ. չ.) 6—20

ОТКРЫТА ПОДПИСКА НА ИЗДАНІЕ

ИМПЕРАТОРСКАГО Вольнаго Экономическаго Общества

„НАЧАЛЬНОЕ НАРОДНОЕ ОБРАЗОВАНІЕ ВЪ РОССІИ“

подъ редакціей членовъ И. В. Э. Общества Г. А. Фальборка и В. И. Чарнолускаго.

Подробные проспекты по требованію высылаются безплатно.

Въ программу изданія, являющагося результатомъ перваго, охватывающаго всю Имперію, изслѣдованія положенія въ Россіи народнаго образованія, входитъ изученіе школъ всѣхъ типовъ, положенія и состава учителей и учащихся въ нихъ, средствъ содержанія, постановки учебно-воспитательной, административной и финансовой стороны народной школы и т. д. Все изданіе заключаетъ въ себѣ **свыше 200 печатныхъ листовъ большого формата въ 8 томахъ** in folio и состоитъ изъ текста, многочисленныхъ діаграммъ и картограммъ, статистическихъ таблицъ по губерніямъ, районамъ, уѣздамъ и городамъ Имперіи.

Цѣна за все изданіе по подпискѣ: 25 руб., въ прочныхъ папкахъ 28 руб.

Допускается разсрочка: при подпискѣ 15 рубл. и при выходѣ третьяго и четвертаго томовъ по 5 рубл. По закрытіи подписки цѣна будетъ повышена.

Первые два тома изданія (LIX+825 стр.) вышли изъ печати и немедленно высылаются подписчикамъ. Цѣна каждаго тома въ отдѣльной продажѣ 6 рублей. Слѣдующій томъ печатается.

Подписка на изданіе принимается: въ С.-Петербургѣ, въ И. В. Э. Обществѣ (Забалканскій пр., д. 33) и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ.

3—3

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, համերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առեւտրական Թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանօնադրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենայն ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 Թվի յունվարի 20-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները Թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկօլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 15—15